

ՍՏԵԼԱ ՎԱՐԳԱՆՅԱՆ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
XII ԴԱՐՈՒՄ

(Ըստ Մխիթար Հեռացու և Արուսայիդի կազմախոսական գործերի)

Հայ բժշկական տերմինաբանության դարգացումը սերտորեն կապված է ընդհանուր բժշկության ու բժշկագիտության դարգացման հետ: Եվ դա պատահական չէ. ամեն անգամ, երբ որևէ բնախոսական, կազմախոսական, ախտաբանական կամ այլ բժշկագիտական դաղափար հասունանում է, սրա արտահայտման համար լեզուն ստեղծում է գիտական անվանում՝ տերմին:

Տերմինակերտման ուղիները հիմնականում երկուսն են: Տերմին դառնում են տվյալ լեզվի սովորական բառերը՝ սահմանազատվելով և կորցնելով ընդհանուր լեզվին հատուկ բաղմիրմաստությունը և հուղաարտահայտչականությունը, կամ էլ այդ ընդհանուր նշանակության բառերից տվյալ լեզվի բառակազմական միջոցներով կազմվում են նոր տերմիններ: Տերմինակերտման երկրորդ ճանապարհը պատրաստ օտար տերմինի փոխառությունն է: Հայ բժշկական տերմինաբանությունը հարստացել է հիմնականում առաջին ճանապարհով՝ բնիկ հայերեն բառերից տերմիններ ստեղծելով:

Խ. Մելիք-Փարսադանյանը<sup>1</sup> վերլուծելով Աստվածաշնչի հայերեն թարգմանության (V դ.) բժշկական և բնագիտական տերմինները, նշում է, որ ս. Գրքի մեջ հանդիպող 175 բժշկական և բնագիտական բառերից 128-ը (այսինքն 73 տոկոսը) հայերեն բառեր են: Նույն հեղինակը ուսումնասիրելով մի շարք այլ գործեր, որոնց թվում նաև նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկի VIII դարում կատարված հայերեն թարգմանությունը, հանգում է այն եզրակացության, որ «Ընդհանուր առմամբ մինչև 10-րդ դարը հայ գրականության մեջ գործ են ածված մոտ 900 բժշկական և բնագիտական արմատական բառեր և տերմիններ, որոնց մեջ հունարեն բառերը կազմում են միայն 10 տոկոսը»:

Սույն հոդվածում պիտի փորձենք վերլուծել հայ բժշկական տերմինաբանության վիճակը հետագա ժամանակներում, երբ արարական բժշկությունը զրավել էր տիրապետող գիրք համաշխարհային բժշկության մեջ, և արարներնր դարձել իսլամական Արևելքի գիտության լեզուն: Մեր ուսումնասիրության առարկա են հանդիսացել 12-րդ դարի հեղինակներ Մխիթար Հեռացու և Արուսայիդի կազմախոսական գործերը: Արուսայիդի «Յաղագս կազմութեան մար-

<sup>1</sup> Խ. Մելիք-Փարսադանյան, Հայ հին բժշկական և բնագիտական լեզուական ծագման մասին, «Հայ բժշկության և բնագիտության պատմության սեկտորի աշխատություններ», Երևան, 1949, էջ 115—123:

դռն» (Մաշտոցի անվան Մատենադարան ձև. 1978, 549, 8397, 4268, 1814 և այլն) և Մխիթար Հերացու «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աշացն» (ձև. ՆՆ 715, 5622, 464, 8493) գործերում բժշկական տերմինների բնագիտութեամբ կազմում է 280, որոնցից միայն 70-ը օտար փոխառութուններ են, իսկ մնացածը 210-ը, այսինքն 75 տոկոսը, հայերեն<sup>2</sup>: Վերջիններիս զգալի մասը մնացել է մեր լեզվի հիմնական բառաֆոնդում և պատմական տարրեր շրջաններում (գրաբար, միջին հայերեն, ժամանակակից գրական լեզու) պահպանել է իր ձևախմբաբանական գոյությունը: Գրանցից են արմունկ, առամ, լեզու, գլուխ, ոսկր, ոտք, սերմ, վայժաղ և այլն: Ըստ մեր հաշվումների Մխիթար Հերացին օգտագործել է 27 նոր տերմին, որոնք չեն հանդիպում նրանից առաջ, աչլ աղբյուրներում, իսկ Արուսայիզը, շնայած նրա գործի ծավալը շատ ավելի մեծ է, 37: Բուն հայերեն տերմինների մի մասը ժամանակի բնացրում կորցրել է իր բժշկական տերմինարանական նշանակությունը՝ շարունակելով մնալ բնագիտութեամբ կենսաբանական տարր: Օրինակ՝ աղբյուր բառը Մխիթար Հերացու կազմախոսական գործում օգտագործված է lacus lacrimalis, արտասուքի աղբյուր իմաստով: Արդի բժշկական տերմինարանության մեջ այն փոխարինվել է արտասուքով: Գործ տերմինը Արուսայիզը և Մխիթար Հերացին օգտագործել են functio-ի իմաստով, այժմյան բժշկական տերմինարանության մեջ այն փոխարինվել է գործունեություն տերմինով: Բարձր բառը Արուսայիզի մոտ օգտագործվել է appetitus իմաստով: Այժմ բժշկական աշխատություններում այն չի գործածվում՝ դիջելով իր տեղը ակտիվ բառին:

Մրանից բացի միջնադարյան բժշկական գրականության մեջ լայն տարածում ունեցող մի շարք տերմիններ այժմ բոլորովին հնացել են և համարվում են արխայիկ ձևեր: Այսպես, օրինակ, քէն (այժմ՝ 1. քիակ, 2. ուս), աղէնորս (այժմ՝ աղիք), առաստաղ բերնին (այժմ՝ բիմբ), լիսեռ (այժմ՝ ողն), փող ջեղ (այժմ՝ տեսանելի) և այլն: Մրանք չեն դիմացել ժամանակի բնությունը, մեր կարծիքով, տերմինի անորոշության պատճառով: Օրինակ՝ լիսեռ բառը տարբեր շրջաններում նշանակել է 1. ողն (vertebra), 2. ձկնուկ (patella), 3. ոլոք (tibia): Արուսայիզի «Մարդակազմութեան» մեջ արտացոլված է առաջին նշանակությունը՝ ողն. հետագայում բժշկական տերմինարանության ավելի զարգացած պայմաններում, հավանական է, ավելի հարմար են գտել առանձին տերմիններ ունենալը և հին լիսեռ-ը կորցրել է իր նշանակությունը և զարձեղ արխայիկ: Նույնը կատարվել է ջրհեղ տերմինի հետ, որը ունեցել է բազմակի նշանակություններ՝ 1. միզաղց (urether), 2. մեզ (urina), 3. առնանդամ (penis): Հետագայում աչլ բոլոր նշանակությունների համար ստեղծվել են նույնպես առանձին տերմիններ և հին ջրհեղ-ի իմաստը մթազնվել է:

Որոշ դեպքերում այդպիսի բազմիմաստ տերմինը պահպանվել է արդի տերմինարանության մեջ շնորհիվ այն բանի, որ նա սկսել է մշտապես արտահայտել այդ բազմակի նշանակություններից միայն մեկը: Օրինակ, ջեղ տերմինը Արուսայիզի մոտ բազմիմաստ է, այն գործածվում է՝ 1. նյարդ-ի (nervus), 2. ջիլ-ի (tendo), 3. մկան-ի (musculus) նշանակությամբ, այնինչ Մխիթարի մոտ ջեղ-ը արդեն միշտ օգտագործվում է նյարդ-ի իմաստով: Նույնն ենք գտնում հետագայում Ամիրզոլվաթի «Օգուտ բժշկութեան» գործում:

Այսպիսով, իմաստի նեղացման և սահմանադատման հետևանքով ջեղ-ը պահպանել է իր նշանակությունը արդի բժշկական գրականության մեջ (նյարդ-

<sup>2</sup> Հողմա՞նք վերջում արվում է այդ բառերի ցանկը:

ներվ գոլգահեռ ձևերի կողքին): Հետաքրքրական է, որ Մխիթար Հերացին Աբուսալիզի ժամանակակիցը, ավելի ճիշտ է հասկացել տերմինաբանության մեջ իշխող առաջադեմ միտումը, քան Աբուսալիզը:

Նույնը կատարվել է երակ տերմինի հետ, որը Աբուսալիզի մտածումի բազմակի նշանակություն՝ 1. անոթ (vas), 2. երակ (vena), 3. ջիղ, նյարդ (nervus) Մխիթարը այստեղ էլ կատարել է սահմանադատում, նա նյարդը երբեք չի անվանում երակ, վերջին տերմինը օգտագործելով միայն անոթ-ի իմաստով (ճեռագայում այս տերմինի իմաստն ավելի նեղացավ և այն պահպանեց միայն իր երակ-vena նշանակությունը):

Այսպիսի օրինաչափություն նկատվում է նաև այլ տերմինների նկատմամբ: Օրինակ, բազուկ տերմինը, որն արտահայտել է 1. քև և 2. քևի մաս (ուսից մինչև դաստակը, կամ արմունկից մինչև դաստակը), Աբուսալիզի մտածումի նախարազկի ոսկրի՝ ծղիկի (ulna) իմաստ: Արդի տերմինաբանության մեջ այն նշանակում է brachium (հուն. βραχιον), այսինքն՝ քևի մաս ուսից մինչև արմունկ: Արխաիկ նշանակությամբ այն տարածված է ժողովրդական միջավայրում նաև այժօր: Կամ էլ ծղի, ծղիկ տերմինը, որը Աբուսալիզի մտածումի այժմյան բազկուկ-ի (brachium) նշանակությունը, արդի գրականության մեջ ստացել է (ulna-ի) նախարազկի միջային ոսկրի նշանակություն: Այդ տերմինն էլ ունեցել է բազմակի նշանակություն՝ brachium-ից բացի նաև 1. ամբողջ քև, 2. ոտք, 3. ոլոխ: Իմաստային սահմանադատման և նեղացման ճանապարհով նա հարատևեց մինչև մեր օրերը և անցավ արդի բժշկական տերմինաբանությանը՝ ծղիկ (ulna) իմաստով: Նախարազկի կողմնային ոսկրի՝ ճանանչի (radius) անվանումը Աբուսալիզի մտածումի գեոս գոյություն չունի:

Թուրք գեպրերում չէ, որ տերմինները՝ այդ ճանապարհով պահպանել են իրենց գոյությունը՝ ցուցաբերելով ճկունություն: Օրինակ, նույն տերմինը, որը Աբուսալիզի մտածումի շորս իմաստներից (1. ոտք, 2. քև, 3. ոտքի մաս ազդեցից մինչև ձունկը, 4 կոնֆոսկը) պահպանել է միայն մեկը՝ կոնֆոսկը, դուրս է մղվել արդի բժշկական տերմինաբանությանից, սակայն մնացել է բնդհանուր լեզվի և հատկապես ժողովրդական լեզվի շրջանառության մեջ: Այդ կարելի է ասել նաև մի քանի այլ տերմինների մասին, որոնք հանդիպում են Աբուսալիզի գործում և հատուկ են միջին հաշիբենին, ինչպես աշիկայ (կույր), աղէնուր, կոնուկ, դամարցալ (phlebitis, երակաբորբ): Վերջին գեպրում դամարցալը դարձել է դմուրցալ: Սրանք նույնպես դուրս են մնացել գիտական տերմինաբանությանից, սակայն՝ դեռ հանդիպում են ժողովրդական միջավայրում: Նրանց տեղն են զբաղել բնիկ հայերեն բառերը, որոնք բնդհանուր են և զործածական հաշիբենի բոլոր շրջաններում (կույր, անառ, աղիք):

Մխիթար Հերացու և Աբուսալիզի կազմախոսական գործերում տերմինի բաղմիմաստության կողքին հանդիպում ենք նաև հոմանիշության երևույթներին: Այս տեսակետից շատ հարուստ է քաղանք (membrana, tunica) տերմինը, որը միջնադարում երևան է գալիս 5 հոմանիշներով՝ 1. աստառ, 2. մաշկ, 3. միզն, միզղ, 4. մուրք, տապաղայ:

Սրանցից երկուսը՝ մաշկ և մուրք, արդի տերմինաբանության մեջ բնավ չեն արտահայտում քաղանքի իմաստ, այլ միայն նշանակում են մաշկ (corium, derma, cutis): Արաբերենից փոխառված տապաղա-ն վաղուց է մոռացվել, իսկ միզն, միզղ-ը և աստառ-ը հնացել են: Արդի բժշկական տերմինա-

բանություն մեջ նրանց փոխարինել են հետևյալ հումանիզները՝ քաղանք, պառուսակ, պատյան: Խոց (ulcus, helcos) տերմինը նույնպես ունի հումանիզների մի խումբ՝ 1. կարհայ, 2. բար, 3. խաղավարտ. «Եւ անուանեն կարհայ և բաթ, և խաղաւարտ այլ ասեն» (ձեռ. № 715, 161բ): Սրանցից արդի տերմինաբանություն մեջ պահպանվել է միայն խոց տերմինը:

Աբուսայիդի և Մխիթար Հերացու կազմախոսական աշխատություններում օգտագործված բժշկական տերմինների հայկական շերտը ապացույց է հայերեն լեզվի հարստության և ճկունության, որը հնարավորություն է ընձեռել ստեղծելու ուրույն և ճոխ բժշկական տերմինաբանություն:

Սակայն հայ բժշկությունը, սրա հետ միասին և հայկական տերմինաբանությունը, երբեք չեն մեկուսացել շինական պարիսպով, այլ օգտվել են առաջադեմ ազգերի գիտությունից՝ միշտ հարստանալով նրանց գանձերով: Այդպիսի սերտ կապեր դարեր շարունակ գոյություն են ունեցել հայ և հունահռոմեական բժշկության ու բժշկական տերմինաբանության միջև: Հունարեն և լատիներեն տերմինները հաճախ են գործածվել հայ բժիշկների կողմից: Այդ տերմինների հիման վրա ստեղծված X դարի հունարեն-հայերեն բառարանը՝ «Բառք Գաղիանոսի բժշկապետի», ընդգրկում է մոտ 400 բառ: Սրանցից միայն մի փոքր մասն ստացավ լայն կիրառում և հարատևեց մինչև մեր օրերը:

X դարից ուժեղանում է արաբական բժշկության ազդեցությունը: Հայ բժշկական գրականության մեջ արաբական տերմիններն օգտագործվում են ոչ հազվադեպ: Այսպես, օրինակ, բստ վ. Թորգոմյանի տվյալների<sup>3</sup>, Գազիկ Ա. օրոք գրված բժշկարանում (X դար) երևան են գալիս արաբական տերմիններ՝ կարուրայ, պուհուան, հապ, հալիլայ, պլղամ, սաֆրայ, սավտայ, սապո, մաևուն և այլն:

Մեր կողմից ուսումնասիրված Մխիթար Հերացու և Աբուսայիդի կազմախոսական գործերի մեջ օգտագործված են 70 օտար տերմիններ, որոնց մեծ մասը (57) կազմում են արաբերենից փոխառված տերմինները: Մնացած օտարաբանությունները, բստ ծագման, հետևյալ պատկերն են տալիս. հունական՝ 7, պահլավական-պարսկական՝ 3, թաթարական՝ 2, ասորական՝ 1: Այդ 70 փոխառված տերմիններից միայն 20-ը չեն թարգմանված և շունեն հայերեն գոհահեռ տերմիններ: Դրանք վերաբերում են գլխավորապես ճանաչված, լայն տարածում ունեցող հիվանդությունների և գլխավոր հեղահյութների անվանումներին (սաֆրայ, լակուայ, ֆալին, սաֆրայ, սավտայ) կամ այն բառերին, որոնք վաղուց փոխառված լինելով, արդեն չէին գիտվում իրրե օտար բառեր և կազմում էին նոր բառարարություններ՝ օրինակ. զեն-զենուրիւն, ահոկ-ահոկեյ, դալապայ առնել, խումար-խումարուրիւն):

Անհրաժեշտ է նշել, որ արաբերեն և մյուս օտար տերմինները բոլոր ձևազրկում գրվել են հայատառ: Հաշերեն և օտար լեզուների, առանձնապես արաբերենի, հնչյունական զգալի անհամապատասխանությունները ստեղծում են դժվարություններ բառարանի օգնությամբ օտար տերմինի ծագումը պարզելու համար: Նյութի վերլուծության հիման վրա (տե՛ս ստորև տրվող աղյուսակը) մենք հանդում ենք միջնադարում արաբերեն բաղաձայնների հայերեն

<sup>3</sup> Վ. Թորգոմյան, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, Բազմավեպ, 1923, էջ 7-11, 39-43, 69-71:

ԲԱՂԱԶԱՅԱՆՆԵՐԻ ԱՐԱՐԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արար. հայ.

օրինակներ

ب	պ	ب	— պապ	رطوبة	— բուստուպաթ
ن	թ	انتشار	— ինթիշար	ماتحة	— մուլթահիմայ
ث	թ	الثمن	— իթնալաշարայ	مثقال	— միթլալ
ج	ճ	فالج	— ֆալիճ	زجاجي	— զուճաճի
ق	զ	قر	— կարհայ	ماتحة	— մուլթահիմայ
خ	խ	خط	— խիտ	خمار	— խումար
س	ս	سوداء	— սավտայ	ذفيف	— տազիզ
ذ	զ	جاذب	— ճազիպ		
ر	ռ, ր	رطوبة	— բուստուպաթ	خمار	— խումար
ز	զ	زجاجي	— զուճաճի		
س	ս	سكتة	— սարթայ	سوداء	— սավտայ
ش	շ	شيكبة	— շուկաթիայ	شريدن	— շիրիան
ص	ս	ص	— սալիմ	صفراء	— սաֆրայ
ض	զ	عضلة	— ազալա (ունք)	هاضم	— հազիմ
ط	տ	ط فية	— տաֆիայ	خلط	— խիտ
ع	է, յ, —	عنبيدة	— յանապիայ	علاء	— էլաթ
ق	զ	ق	— զարապայ	مغص	— մազաս
ف	ֆ	فالج	— ֆալիճ	ط فية	— տաֆիայ
ق	զ, կ, խ*	قوون	— զուլին	لقوة	— լալուայ
ك	կ, կ	سكتة	— սարթայ	عنكبوتية	— յանկապուլիայ
ل	լ	ق	— զարապայ	لقوة	— լալուայ
م	մ	مغص	— մազաս	مشيرة	— մշիմայ
ن	ն	عنبيدة	— յանապիայ	شريدن	— շիրիան
و	օ	هاضم	— հազիմ	هواء	— հուայ
و	օ, վ	هواء	— հուայ	سوداء	— սավտայ

տառագարծության վերաբերյալ որոշ եղբակացությունների, որոնք համընկնում են Կ. Բասմաջյանի<sup>1</sup> և Հ. Կարստի<sup>2</sup> տվյալների հետ:

Արարերեն այս բառերը փոխառվել են հայերեն բաղաձայնների ձայնային տեղաշարժից հետո (այսինքն միջին դարերում), այդ պատճառով էլ կատարված ձայնաշրջությունը ստանում է իր դրային արտահայտությունը: Ըստ որում, օտար լեզվի ձայնեղ բաղաձայնները տառագարծվում են խուլերի՝ օրինակ, արարերենի օ-պ-ի) օ-պապ), ը-տ-ի (սոճա-սավտայ), ճ-ն-ի (ճաճ-նազիպ), սակայն արտասանվում են միջին հայերենի լեզվային օրենքների հիման վրա իբրև ձայնեղ հնչյուններ՝ ր, դ, ջ, տալով՝ բար, սավղայ, ջազիբ: Եթե

\* Հազվադեպ է կիրառվում, օրինակ՝ قر نبيدة — խաանիկ:

<sup>1</sup> Կ. Բասմաջյան, Ամիրզոզյաթ Ամասիացույ «Անգիտաց անպիտ», Յառաջարան հրատարակչին, Վիեննա, 1927, էջ ԺԱ—ԺԲ:

<sup>2</sup> J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strasburg, 1901.

արարերեն-հայերեն բաղաձայնների տառադարձության հարցում գոյություն ունի խիստ օրինաչափություն, այդպիսով արարերեն-հայերեն ձայնավորների տառադարձության ժամանակ ճիշտ տառադարձված բառերի կոդքին, օրինակ *حمار*-խումար, *فريق*-աաղիղ, *مغص*-մաղաս և այլն, մենք հանդիպում ենք անկանոնության երևույթների՝ հայերենում օտար ձայնավորների սղման, արարերենի ավյալ ձայնավորի դիմաց մի այլ ձայնավորի առկայության: Այսպես, օրինակ, *فريق* վերածվել է հայերենում կարնայ-ի (արարերենի ու-ն դարձել է հայերենում ա), *فواوون*-դուլին (արարերենի ու-ն ավել է հայերենում ի), *مشيمه*-մշիմա (արարերենի ա-ն սղված է): Կարստը իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականության» մեջ (էջ 38) բացատրում է այս երևույթը ոչ թե հայերեն ձայնավորների օրենքների ազդեցությամբ, այլ մեծ մասամբ խոսակցական արարերենի ազդեցությամբ և մասամբ էլ իրրե ոչ ճշգրիտ, անփույթ տառադարձության հետևանք:

Արարերեն և այլ օտար տերմինները թարգմանելիս և նրանց կոդքին բուն հայերեն տերմիններ ստեղծելիս Արուսայիզը և Մխիթար Հերացին հանդես են գալիս՝ 1. թարգմանչի, 2. ինքնուրույն տերմիններ ստեղծողի դերում:

Արուսայիզը առաջինի դերում հանդես է գալիս շատ հաճախ, ավելի կամ պակաս հաջողությամբ: Նա մեծ թվով ստամոքսի և աղիքների կազմախոսություններ վերաբերող տերմիններ է թարգմանել արարերենից:

Ստամոքսի 4 ուժերը՝ Բարշող (*جاذب*), բռնող (*ماسك*), մարսեցնող (*هاضم*), վարող (*طافية*), թարգմանված են բավական հաջող բառապատճենմամբ: Արուսայիզը, ինչպես տեսնում ենք, օգտագործել է ենթակայական դերբայի ձևը, որը տերմինային կապակցության մեջ որոշչի դեր է կատարում:

Աղինելի հատվածներին վերաբերող տերմինները թարգմանելիս (նույնպես բառապատճենմամբ) Արուսայիզն արդեն այսպիսի հաջողության չի հասնում: Այսպես, ստամոքսանցքի համար թեև նա օգտագործում է արարերենի պապ (*باب* դուս) բառը, բայց տարօրինակ կերպով դրա դիմաց դնում է ղոնապան հայերեն ճիշտ տերմինը: Այդ սխալը հետագայում ուղղել է Ամիր-դովլաթը՝ արարերեն *باب* (դուս) դարձնելով պավապ *بواب* (ղոնապան): Բայց ելնելով արարերեն սխալ բառից, Արուսայիզը կարող էր տալ հայերեն ճիշտ տերմին միայն այն դեպքում, երբ նրան հայտնի լիներ լատիներեն *pylorus* (ղոնապան) ձևը: Այս փաստը և հետագա վերլուծությունից ստացված այլ տվյալներ գալիս են հաստատելու, որ հայ բժիշկները բաշածանոթ են եղել հունա-հռոմեական բժշկության նվաճումներին և օգտվել են նրանցից նույնիսկ արարական բժշկության ծաղկման շրջանում: Տասներկուամտնյա աղիքը *اثني عشرية* Արուսայիզը բառացի թարգմանել է՝ երկուսասան և աշս էլ որոշ շափով համապատասխանում է լատինական տերմինին (*duodenum*):

Շատ հաջող է թարգմանված ցամաք աղէնորտ տերմինը, որը ճիշտ և ճիշտ համապատասխանում է ինչպես արարերեն, նույնպես և լատիներեն տերմինի իմաստին (*jejunum* *صائم*), և նույնիսկ պահպանված է բառակապակցության բերականական ձևը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ արար բժիշկները, իրենց տերմինաբանական կարիքների համար, հաճախ դիմել են հունա-լատինական տերմինների օգնությանը՝ մասամբ թարգմանելով

կամ բառապատճենմամբ (ինչպես այդ տեղի է ունեցել վերոհիշյալ դեպքերում), մասամբ էլ պահելով իրրև օտարաբանություններ (colon-قولون, grafi-dion-الغرين): Երբեմն էլ նրանք չեն հետևել հունա-լատինական տերմինաբանությանը և ստեղծել են նոր տերմիններ: Այսպես, բարակ աղիների երրորդ մասը, որը ունի լատիներեն ileum (զստային) անվանումը, արաբների մոտ երևան է գալիս իրրև قَبَض, որը Աբուսալիդի կողմից ձիշտ է թարգմանված՝ մանր: Արդի հայ տերմինաբանության մեջ սրա փոխարեն գործ է ածվում ուրիշ տերմին՝ գալարաղի կամ զստաղի (վերջինս լատիներենի ուղիղ թարգմանությունն է):

Աբուսալիդը բավական անհաջող է թարգմանել հաստ աղիքին վերաբերող արարերեն տերմինները: Այստեղ ստեղծվում է այն տպավորությունը, որ թարգմանիչը չի հասկացել արարերեն տերմինները կամ դրանք թարգմանել է իր ինքնուրույն ստուգաբանությամբ: Այսպես, օրինակ, հաստ աղիների առաջին հատվածի արարերեն الاغور (կույր) անվանումը, որը համընկնում է լատիներենի caecum իմաստի հետ, կամ շհասկանալու պատճառով, կամ էլ որոշ կաղմախոսական նկատառումներով թարգմանված է ծուռ: Հաստ աղիների երկրորդ հատվածի արարերեն قولون անվանումը թարգմանվել է հայերեն ձայնավոր: Արդի բժշկական տերմինաբանության մեջ օգտագործվում է խրաղի՝ ձեր (հունարենի ζοίον բառի ուղիղ թարգմանություն): Վերջապես, հաստ աղիների ստորին մասը, որը լատիներեն և արարերեն տերմինաբանության մեջ ունի նույն ուղիղ-ի իմաստը (rectum. المقيد), հայերենում Աբուսալիդի կողմից անվանվում է հիմն և զգայութիւն աղէնորտացն: Արդի զբաղանություն մեջ վերականգնվել է ձիշտ տերմինը՝ ուղիղ աղի:

Աբուսալիդի կաղմախոսության մեջ տեղ են գտել նաև մի շարք աստղաչիտական արարերեն տերմիններ (իրենց զուգահեռ հայերեն ձևերով), որոնք սերտորեն կապված են կաղմախոսական հասկացությունների հետ: Աբուսալիդը իր «Մարդակազմութեան» մեջ տուրք է տալիս միջնագարում իշխող միտաիկ աստղազուշակային տեսություններին, որոնք կապում էին մարդու մարմնի աշխարհի մի գործարան արեգակի, լուսնի կամ էլ որևէ մոլորակի ազդեցության հետ: Այսպես, օրինակ, լուսինը համարվում էր ուղեղի և թոքի տանուտեշ, արեգակը սրտի, լուսնիթազը (արաբ. مشتری Օտախա, լատ. Jupiter)՝ լյարդը, բերանի, Փայլածուն (արաբ. عطارد օտարխա, լատ. Mercurius)՝ լեզվի, Հրատը (արաբ. المريخ Մասիխ, լատ. Mars)՝ լեզապուրկի, Լուսարերը (արաբ. الزهره Ջահրուլ, լատ. Venus)՝ ամորձիքի, երիկամի, Մոլորակների անունները, փաստորեն, դարձել են այդ գործարանների խորհրդանիշներ, և Աբուսալիդը հաճախ ձգտել է բացատրել տարբեր հիվանդությունների բնույթը աղ մոլորակների աննպաստ ազդեցությամբ: Օրինակ, նա գրում է. «Երբ որ ծնանի տղայն ի մօրէն, թէ չայն ժամն լուսինն ի պեղծ աստեղատունն լինի, տղին աչրն շխատ լինի և ցաւոտ: Եւ երբ տղայն մեկնի ի մօրէն, և լուսինն ի Ջօհային աստեղատունն լինի, տղայն աշիկայ լինի» («ձեռ. № 1973, 103բ): Ի տարբերություն Աբուսալիդի, Մխիթար Հերացին այդ երևույթները

6 Ձի բացատրված նաև այն հանգամանքը, որ տերմինները կարող են աղէնաղված լինել նե-տազայում, բանի որ Աբուսալիդի «Վասն ստեղծման աղէնորտացն» գլուխը շատ աղա-վազված է, և երկար աշխատանքից հետո, Ամիրղուլյաթի «Յգուտ բժշկութեան» համապատասխան հատվածի հետ համեմատություններ կատարելով, մեզ հաջողվեց խաթարված բնագիրը վերա-կանգնել:

գործում է բացատրել գիտականորեն, կապելով աչքի մկանների բորբոքային պրոցեսների հետ:

Կատարված ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ Արուսաչիզը, իբրև թարգմանիչ, երբեմն գտել է ճշգրիտ հայկական տերմիններ, երբեմն էլ շեղվել է ուղիղ ճանապարհից: Նրա դերը ինքնուրույն տերմիններ ստեղծելու գործում ավելի փոքր է:

Անցնենք Մխիթար Հերացու՝ իբրև տերմինաբանի բնութագրմանը: Բարբախտաբար, մեզ են հասել նրա կազմախոսական գործի առաջին խմբերը, որոնք վերաբերում են «Աչաց կազմութեան»-ը: Արուսաչիզի «Մարդակազմութեան» այս մասը շատ թերի է թե՛ գիտական արժեքի և թե՛ տերմինաբանական տեսակետից: Արուսաչիզը այստեղ տալիս է միայն արաբերեն տերմիններ առանց սրանց թարգմանության. շատ հաճախ էլ աչք տերմինները անճանաչելիորեն աղճատված են, օրինակ խառնիէ-ի (*cornea*) փոխարեն՝ դունիէ, շապախայ-ի (*retina*) փոխարեն՝ շալիֆնէ, մշիմայ-ի (*chorioidea*) դիմաց՝ ուշքամիէ:

Մխիթար Հերացու «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աչացն» գործը ունի բարձր մասնագիտական արժեք և փայլում է իր լեզվի հարստութեամբ: Նա այդ գործում իրեն դրսևորել է իբրև իմաստուն բժիշկ և լեզվաբան: Նա ստեղծում է մի շարք իմաստալից հայերեն տերմիններ, որոնք դադարում են միայն թարգմանություն լինելուց և ստանում են բառակազմական նորաբանությունների որակ:

Հարկ ենք համարում նորից շեշտել, որ Մխիթար Հերացին, ի տարբերություն Արուսաչիզի, ճիշտ կողմնորոշվեց մկան և երակ տերմինների օգտագործման հարցում՝ մոտենալով սրանց կիրառման արդի նշանակությանը:

Աչքի կազմախոսական հայկական տերմինաբանությունն սկսվում է փաստորեն Մխիթար Հերացուց: Աչքի թաղանթների և հեղահյութների համար նա ստեղծել է բառապատճենամաճի հայերեն բարեհնչուն և ճշգրիտ տերմիններ, օրինակ, եղբեբենի (լատ. *cornea*, արաբ. *آبي قز*), խաղողենի (*uvea Galeni*, *آبي قز*), սարգոստենի (արաբ. *آبي قز*), սառնենի (*lens crystallina*, *آبي قز*), ձվի սպիտակուցենի (*humor aqueus*), ապիկենի (*corpus vitreum*, *آبي قز*): Սրանցից միայն երկուսն են պահպանված արդի բժշկական տերմինաբանության մեջ (դրանք են՝ եղբեբենի և ապիկենի): Ենի վերջածանցով կազմված այս տերմինները բավական եղան, որպեսզի հետագայում Մխիթար Հերացու տերմինակերտման ուղիով և հետևություններ ժամանակակից ակնաբուժությունը նույն ածանցով ստեղծեր մի շարք նոր տերմիններ, ինչպես՝ ցանցենի, անոթենի, շաղկապենի, պնդենի (վերջինս ընդօրինակված է Հերացու պինդ մարմին տերմինից և նրա տերմինակազմական սկզբունքով դարձել է պնդենի):

Շատ հետաքրքրական է սառնենի տերմինի պատմությունը: Այն ստեղծելիս Մխիթար Հերացին իբրև ելակետ ունեցել է արաբերենի *آبي قز* (*սառցալիճ*) և լատիներենի *lens crystallina* (բյուրեղային սալ) ձևերը: Նա բառացիորեն չի թարգմանել այս երկու տերմիններից որևէ մեկը, այլ վերցրել է հայերենի սառնենի բառը, որն այն ժամանակ նշանակել է և՛ բյուրեղ, և՛ սառույց: Այսպիսով, երկու իմաստների համադրության ճանապարհով նա ստեղծել է նոր տերմին, որն ավելի խորն է բնութագրում աչքի այս հեղահյութի հատկությունները, քան լատիներեն կամ արաբերեն տերմինները: Այստեղ Հերացին ցուցաբերել է նոր տերմիններ ստեղծելու բարձր արվեստ: Օգտվելով հունա-



լատիներեն տերմինաբանության հարստությունից՝ նա բնարել է ուրույն, հայերեն լեզվին հարադատ ճանապարհ: Յավոր սրտի, Հերացու այս հոյակապ տերմինը չեն պահպանել արդի հայ բժշկական բառարանները՝ նրա փոխարեն դործածելով ուսլեյակ տերմինը, որը այդ անվան լատիներենի (lens) թերթի թարգմանության օրինակ է: Ի դեպ հիշենք, որ արարներն էլ մեզ նման հետադարձ մոռացան իրենց *جلد* (սառցային) տերմինը և հետևեցին լատիներենին, օգտագործելով *آس* (սոսնյակ):

Բացի ենի մասնիկից, Մխիթար Հերացին ստեղծել է մի շարք տերմիններ ավ մասնիկով, որպիսիք են՝ կոշրած (conjunctiva, *آس*), մազկալած (սոսնյակի մասին՝ նուրբ ձեղքվածքներ ունեցող), խժկած (occlusio pupillae), վարած (բիրի լայնանալուց լույսի տարածում):

Ինչ վերաբերում է Մխիթարի երկու այլ տերմիններին՝ սեկ (chorioidea, *آس*) և արկ (retina, *آس*), ապա սրանք լայն ճանաչում չտացան և փոխարինվեցին արդի տերմինաբանության մեջ անոթենի և ցանցենի տերմիններով՝ երկուսն էլ Մխիթարի սգով ստեղծված: Պատմական տեսակետից հետաքրքրական է վերջին տերմինը: Այն ստեղծելիս մեր բժշկապետը իրրե ելակետ ունեցել է լատիներեն retina (ցանց) և նույն իմաստով արարներն *آس* տերմինները: Հավանական է, որ այն ժամանակ հայերեն արկ բառը արտահայտել է նաև ցանցի իմաստ, բայց հետագայում այդ իմաստը մթազնել է: Ի դեպ հիշենք, որ Հերացու այս երկու տերմինները, ի տարբերություն նրա այլ տերմինների, չունեն իրենց հարակից ձևերը և մեկուսացված են:

Մի հետաքրքրական հանգամանք ևս. բնութագրելով կոշրած աստառի (արգի շաղկապենու) հատկությունները, Մխիթար Հերացին օգտագործել է այժմ արխաիկ խոնտամ ձևը: Հավանական է, որ նա հենց ինքն է ստեղծել այդ տերմինը՝ օգտագործելով խոն, խոշ (արգելք, փուշ), և տամ (չուլհակի սանր) բառերը, որից ստացել է խոնտամ, այսինքն՝ անհարք, կոշտ, իմաստն ունեցող նոր բառը: Ասում են, երբ հուանդական ֆիզիկոս Վան-Հելմոլտեր ստեղծել է գազ բառը, նա մտածել է երկու բառերի մասին՝ Chaos (բառս) և Geist (հոգի), որոնք յուրովի արտահայտում էին նոր նյութի հատկությունները<sup>7</sup>: Հավանաբար նույնը պատահել է Մխիթարի հետ: Եվ այդ դալիս է հաստատելու հայ բժշկապետի մեծ կարողությունը ոչ միայն իրրե բժշկի, այլ տերմինաբանի նաև. խոնտամ տերմինը ստեղծելիս, բոտ երևույթին, նա կարողացավ շաղկապենու վրա նշմարել աննշան բշտիկներ, անհարթություններ, որոնք նկարագրված են արդի գրականության մեջ:

Ինչ վերաբերում է հունա-լատիներեն փոխառված տերմիններին, ապա գրանք օտարաբանությունների շարքում գրավում են երկրորդ տեղը, գիշելով միայն արարներն տերմիններին: Պետք է նաև նշել, որ որոշ դեպքերում հունարեն և լատիներեն տերմինները հայերենին անցել են արարերենի միջնորդությամբ: Օրինակ, հունարեն *κόλον* (լատ. colon) նախ անցել է արարերենին *قولون* ձևով և ապա տառադարձվել հայերենում դուլին (*ق-դ*): Նույնը կատարվել է հունարեն *κολικα* լատ. (colica) խիքք բառի հետ, որը արարերենում դառնում է *قولنج*, իսկ հայերենում՝ դուլինջ և հունարեն *γαστρικόν* (լատ. gastricon) գրքույկ բառի հետ, որը տալիս է արարերենում *اخرابادین* և հայերենում՝ ախրապալաին (դեղաբան):

<sup>7</sup> А. Реформатский, Введение в языковедение, Москва, 1955, стр. 113.

Մնացած 4 հունա-լատիններն տերմինները անցել են հայերենին առանց արարերենի միջնորդության՝ κεφαλική (vena cephalica)—կիֆալ երակ<sup>8</sup>, καθολική (vena catholica)—կաթուղիկե, βασική (v. basilica)—պասիլիկ երակ: Չայնեզների որոշ փոփոխությամբ հանդերձ հունարեն στόμαχος (stomachus) տերմինը բավական ճիշտ տառադարձվել է ստամոխս: Հավանաբար լատիններն ծագում ունի լուսնիօն (տեսաներվ) տերմինը. (լատիններն lux լույս, աչք, տեսողություն բառի աղճատված ձևը): Այսպիսով, հունա-լատիններն տերմինները, ուսումնասիրված օտարաբանությունների շարքում դրավելով երկրորդ տեղը (արարերենից հետո), վկայում են այն խոր ազդեցության և հարատև կապերի մասին, որոնք միշտ գոյություն են ունեցել հունա-հոմեական և հայ բժշկության միջև նույնիսկ արարական բժշկության տիրապետության շրջանում<sup>9</sup>: Այս տերմիններն ունեն կազմախոսական կարևոր նշանակություն (տեսաներվ, բազկի մեծ երակներ, ստամոխս, հաստ աղիների ծավալուն հատված) և եղել են շատ տարածված:

Արուսայիդի և Մխիթար Հերացու կազմախոսական գործերում հանդիպում են պահլավերեն ծագում ունեցող 16 տերմին<sup>10</sup>, որոնք շատ վաղուց են անցել հայերենին և այնպես անբաղաժեքորեն ձուլվել հայերենի բառապաշարին, որ մեծ մասամբ, բացի վերջին 3—4 տերմինները, չեն դիտվում իրրև օտարաբանություն: Այդ տերմիններն են՝ ախտ, արկ, անդամ, աստառ, անտիենլիֆ, ապիկենի, բժիշկ, բազուկ, հակատ, նվագ, սկալառակ, երակ, շիբիկ, պիսակ, զեն, անոկ:

Վերջապես թաթարերենից միայն երկու օտարաբանությունների առկայությունը (ըստ որում, մեկը՝ սեկ, հետագայում շատացավ ճանաչում և մոռացվեց, իսկ մյուսը՝ ֆուբեշ, ճիշտ է, հարատևեց մինչև մեր օրերը, բայց ունի հայերեն ավելի հաջող զուգահեռ ձևեր՝ հարսանիք, վարդածոց) ապացույց է թաթարերենի աննշան ու պատահական ազդեցության:

Հետաքրքրական է, որ մեր կողմից ուսումնասիրված տերմիններից միայն մեկը ունի ասորերեն ծագում<sup>11</sup>. այդ մաշկ (ասոր. meška—մորթ) բառն է: Այսպիսով, Վ. Քորգոմյանի<sup>12</sup> կարծիքը այն մասին, որ Արուսայիդի «Մարդակազմություն»-ը լի է ասորերեն օտարաբանություններով, չի ապացուցվում, և մենք համամիտ ենք Ղ. Հովնանյանի<sup>13</sup> հետ, որը ժխտեց Քորգոմյանի թեզը և բարձր գնահատեց հայ մշակույթին ծառայագրված ասորի գիտնական Արուսայիդի «Մարդակազմության» հայերեն հստակ լեզուն:

Բացի բառ-տերմինից Արուսայիդի և Մխիթար Հերացու կազմախոսական գործերում հանդիպում ենք նաև տերմին-նկարագրության, որը հետագայում,

8 Չ. Անտոյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ (մաս 2, էջ 195) կիֆալը դասել է արարերեն օտարաբանությունների շարքում, սակայն ավելի հավանական է թվում այդ բառի հունարեն ծագումը՝ κεφαλική:

9 Մ. Ա. Օգանյան, История медицины в Армении, Ереван, 1946 թ. I, стр. 150—184.  
2. Մ. Ամալյան, «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ», Երևան, 1966, էջ 180—183:

10 Չ. Անտոյան, Հայերեն Արմատական բառարան, Երևան, 1927—32:

11 նույն տեղում:

12 Վ. Քորգոմյան, Հայ բժշկական ձեռագիրք. Բ. Մարդակազմություն Արուսայիդի, Հանդես ամսօրեայ, 1892, էջ 333—336:

13 Ղ. Յովնանյան, Հետազոտությունը նախնեաց սամկորլնի վրայ, Վիեննա, 1897, 2 հատ., էջ 491—505:

այլ բժիշկների գործերում դարձավ բառ-տերմին: Այսպես, օրինակ՝ Աբուսայի-  
գը երկու զգայարաններին տալիս է բառ-տերմին անվանումներ՝ լսելիք, տե-  
ւանելիք: Երկու այլ զգայարաններ՝ նաշակելիք և հոտոտելիք, նրա մոտ  
նկարագրվում են և շունեն կոնկրետ տերմինավորում: Այսպես. «Եւ երակ մի ի  
բերնին առաստաղն կայ. որ դամէն համ իմանայ» (ձեռ. № 715, էջ 176բ): «Բ  
երակ դատարկ ի բիթն յուզարկեաց, որ զանուշ հոտն առնու և յղեղն առարէ»  
(ձեռ. № 715, էջ 176բ): Այս երկու տերմին-նկարագրությունները մոտ 3 դար  
հետո Ամիրգովլաթի մոտ տերմինավորվում են՝ գառնալով համ-առնելիք և  
հոտալիք<sup>14</sup>: Հինգերորդ զգայարանի՝ շոշափելիքի գաղափարը Աբուսայիգի մոտ  
գեռես գոչություն շունի, իսկ Ամիրգովլաթի մոտ հանդիպում ենք նրա նկարա-  
գրությանը՝ «Եւ Ե զգայութիւն, որ իմանայ զխոշորն և զկակուղն և զծանրն և  
զթեթեւն, և այս ի ձեռն է տպաւորեալ, և այս զգայութիւնն կոպիտ է բան զա-  
մէնն»: Հետագայում նա նույնպես ստացավ համապատասխան անուն, որպես  
բառ-տերմին՝ շոշափելիք:

Տերմին-նկարագրությանը մոտ են Աբուսայիգի մի շարք կազմախոսական  
տերմինները՝ լուծումն ի վեր՝ փսխումի փոխարեն, լուծումն ի վար՝ լուծ, փոր-  
լուծություն իմաստով, արտաֆսելն առաջին՝ միզանցքի բացվածքի, և ար-  
տաքսելն վերջին՝ հետանցքի սրբանի, ծննդոյ տեղ՝ կոնքի և կար արիւն՝ ավշի.  
ավշային անոթի նշանակությամբ: Այս տերմինները տերմին-նկարագրության  
համեմատությամբ արդեն դարձել են ավելի սեղմ, ազատվելով նկարագրու-  
թյան մեջ երկրորդական դեր կատարող բառերից, բայց նրանք դեռ չեն արտա-  
հայտում բառ-հասկացության խտացած իմաստը և կրում են անորոշության և  
պատահականության գծեր: Այդ պատճառով էլ նրանք շահարատեցին մինչև  
մեր օրերը և փոխարինվեցին բուն բառ-տերմիններով, որոնք խտացած ձևով և  
սեղմ, որոշակի արտահայտեցին կազմախոսական հասկացության իմաստը:

Ըստ որում, նշենք, որ Աբուսայիգի ծննդոյ տեղ հայերեն տերմինի փոխա-  
րեն հետագայում օգտագործվեց կոնք-ը, որը հունարեն *κόγχη* (1. խեցի,  
խեցեմուրի, 2. խեցեմուրու պես զոգավոր աման) բառի փոխառյալ ձևն է:  
Հետաքրքրական է, որ այդ կազմախոսական հասկացության համար լատինե-  
րենում օգտագործվել է *pelvis* (տաշտ) անվանումը, որը անցել է փոխառյալ  
ձևով անգլերենին (*pelvis*) և թարգմանաբար ուսերենին (таз), արաբերենին  
*حوض*, գերմաներենին (*Becken*), ֆրանսերենին (*Bassin*): Մինչդեռ հունարե-  
նի *κόγχη* տերմինը հայերենից բացի այդ վերահիշյալ լեզուներում չունի  
կոնքի իմաստ, ինչպես սրա պարզ փոխառության մեջ (համեմատիր ֆրանսե-  
րենի *conque* բառը, որը արտահայտում է միայն խեցի, խեցեմուրի իմաստը)  
և այնպես էլ համապատասխան ուսերենի *раковина*, գերմաներենի *Muschel*,  
անգլերենի *Shell* բառերում, արաբերենի *صدف*-ում: Նկատի ունենանք նաև,  
որ այդ տերմինը՝ կոնք (*pelvis*, *Bassin*, *Becken*, таз, *حوض*) տարբեր լե-  
զուներում ստեղծվել է արտաքին նմանության սկզբունքով, ըստ որում, հայերն  
այն նմանեցրին խեցեմուրթի ձև ունեցող ամանին, իսկ հոմեկացիք և նրանց  
օրինակով անգլիացիք, գերմանացիք, ուսերերը և ֆրանսիացիք՝ տաշտին, ա-  
վաղանին:

Այդ տերմիններից կար արիւն (այժմ 1. ավիշ, 2. ավշանոթ) տերմինի առ-  
կայությունը Աբուսայիգի մոտ ապացույց է այն բանի, որ հայ կազմախոսու-

<sup>14</sup> Ամիրգովլաթ Ամասիացի, *Փզուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 44:*

Ֆյունը գեռես 12-րդ դարում բավական լավ պատկերացում ուներ մարդու ավշաչին սիստեմի մասին, որի մանրամասն նկարագրությունը եվրոպական գրականության մեջ երևան եկավ 17-րդ դարում Գասպարո Ազելիի, Պեկի, Վան-Հոանի և այլոց գործերում:

Վերոհիշյալ պրիմիտիվ տերմիններից է նաև ջուր տերմինը (արդի բժշկական տերմինաբանության մեջ secretum արտազատանք) և նրանից ածականի հարակցությամբ կազմված ենթատեսակ տերմինները՝ ջուր աղի՝ արտասուրի, ջուր լեղի՝ ականջի ծծումբի, ջուր ֆաղցր՝ թուրի և ջուր հոտած՝ սերմի իմաստով: Սրանցից երկուսի համար՝ ջուր աղի և ջուր հոտած, Աբուսայիդը օգտագործել է գուգահեռարար՝ արտասուք և սերմ տերմինները, իսկ մնացածները շին ստացել իրենց հակիրճ ձևը:

Այսպիսով, Աբուսայիդի գործի վերլուծությունը և այն եզրակացությունները, որոնք արվում են Ամիրզովլաթ Ամասիացու գործերը, հատկապես «Օգուտ բժշկութեան»-ը ուսումնասիրելիս, գծում են հայ բժշկական որոշ տերմինների կազմավորման ուղին՝ տերմին-նկարագրությունից դեպի միջակա պրիմիտիվ տերմինը և ապա որոշակի իմաստ արտահայտող կաշուն բառ-տերմին:

Ավարտելով Աբուսայիդի և Մխիթար Հերացու կազմախոսական գործերի բժշկական տերմինների վերլուծությունը, հանդում ենք հետևյալ եզրակացություններին.

1. 12-րդ դարի հայ բժշկական տերմինաբանությունը գտնվում էր բավական բարձր գիտական մակարդակի վրա՝ նրա տերմինների ճնշող մեծամասնությունը (75 տոկոսը) կազմում էին բնիկ հայկական բառեր:

2. Հայ բժշկական տերմինաբանությունը սերտ կապեր է ունեցել օտար և հատկապես արաբական և հունա-լատինական տերմինաբանության հետ, օգտվելով նրանց գիտական գանձերից:

3. Հայ բժշկական տերմինաբանության զարգացման գործում մեծ դեր են խաղացել Աբուսայիդը և Մխիթար Հերացին: Սակայն տերմինակերտման արվեստի և հմտության տեսակետից մենք առաջնության դասինին տալիս ենք Մխիթար Հերացուն ոչ միայն որպես թարգմանչի, այլ նաև որպես տերմիններ ստեղծող նորարարի, որպես բժշկական տերմինաբանության մեջ հարատև և կաշուն ավանդույթ ստեղծողի:

\* \* \*

Հայերեն բոլոր տերմինների բացատրությունը, ինչպես նաև հունա-լատիններեն և արաբերեն տերմինների ստուգաբանությունը կատարված է հետևյալ բառարանների օգնությամբ.

Արեղյան Մ., Հովհաննիսյան Լ. և Տեր-Պողոսյան Ա.—լատին-ուս-հայերեն բժշկական բառարան, Երևան 1951:

Անտոնան Հ.—Հայերեն գալաոսական բառարան, Թիֆլիս, 1913:

Անտոնան Հ.—Հայերեն Արմատական բառարան, հ. Ա-է, Երևան, 1927—1935:

Անտիբեան Կ., Սիրմէլեան Խ., Ազգերեան Մ.—Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, երկու հատորով, Վենետիկ, 1836:

Баранов Х.—Арабско-русский словарь, Москва, 1957:

Թազպազեան Փ.—Բառարան հայերենէ-արաբերեն և արաբերենէ-հայերեն, Պեյրուս, 1960—1964:

Lidell H. G. and Scott R.—Greek—English Lexicon, Oxford, 1940.

*Kronberg H.*— Латинско-русский и русско-латинский лексикон, Москва, 1870.

Ղափրյան Ա.— *Ռուս-հայերեն բառարան*, Երևան, 1968:

Մալխասեանց Ատ.— *Հայերէն բացատրական բառարան*, 4 հատորով, Երևան, 1944—1945:

Մելիք-Փարսադանյան Խ., Սեպեանյան Հ.— *Բառարան (անտիպ)*:

Մխսենյան Յ.— *Առձեռն բարագիրք հայերէն-լատիներէն*, Հոտմ, 1887:

*Sophocles E. A.*— Greek Lexicon of the Roman and Byzantine Periods, vol. 1 a 2, New York.

ՀԱՏՆԵՐԵՆ-ԱՐՏՏԻՆԵՐԵՆ ԲՈՇՇՆԱԿԱՆ, ԲԱՌ-ԱՐՐԱՆ

(Ըստ Միսիթար Հեթացու և Աբուսալիդի կազմակերպության գործերի)

Միջնադարյան	Արդի հայերեն	Արաբերեն	Կարիներեն	Հունարեն
*Ազգալա(ունք)	մկան, մկաններ	عضلة	musculus	
Ախա	Հիվանդություն, ախա		morbis	
Ախրապատին	միջին զարկրում գեղազրուսվյալ և գեղաշինուսվյալ գիրք	اخراپادين	grafidion	ἄσπυριδίων
Ականջ	ականջ		auris	
ԱՆոկ	Հանցանք, վնաս		noxa	
ԱՆոկել	վնասել		nocere	
Ազրիւր	արտազակիճ		lacus lacrimalis	
Ազէկ մանկախիբ	շար ուլիներ		intestinum	
Ազէճորտ	աղիք		vesanus	
Ազիբ	աղիք, աղիքներ		gena, bucca	
Ազուաշ	խենթուկ, ցնորված		1. organon	
*Ազսայ մըշպատան	բաշխող և կերակրող		2. femur	
Այտ	այտ		insensibilis	
Անդամ	1. գործարան		intellectus	
	2. աղիք, աղբոսկր		coecum	
Անդդալ	զգայությունը կորցրած, անզգա		oculus	
Անտիճեկիբ	խորհրդածություն, մտածողա- կանություն		corpus vitreum	
Աչիկայ	կույր		palatum	
Աչք	աչք			
*Ապիկենի	ապակենի			
Առաստաղն բերնին	բիմբ	زجاجي		

\* Սրտը դեպքերում տերմինի ծագումը պարզարանելու համար արվում են արաբերեն և իտալերեն հոմանիշներ, իսկ համապատասխան լատիներեն տերմինի բացակայության դեպքում բացատրությունները տրվում են հայերեն. աստղանիշով նշանակված են մեր կողմից ստուգարանված տերմինները.

Առողջություն	առողջություն	sanitas
Ատառ	Յաղանթ	membrana
Ատամ	ատամ	dens
Արագան	դեղնախա	icterus
Արգանդ	արգանդ	uterus
Արիւն	արյուն	haema
*Արկ	ցանցենի	retina
Արմունկ	արմունկ	cubitus
Արտասուք	արտասուք, արցունք	lacrima
*Արտաբանդն առաջին	ծիղանցքի բացվածք	orificium urethrae
*Արտաբանդն վերջին	հետանցք, սրբան	anus
*Աւար	կուր աղբը	intestinum caecum
*Արհալ	բաղիլիկ երակ	v. basilica
Արտուք	կղանք	faeces
Բազուկ	ծղիկ, ծղուկը	ulna
*Բաթ	վերք, խոց	vulnus, ulcus
Բարբ	ախորժակ	appetitus
Բերան	բերան	os
Բէճ	ուսաղուխ, կանակ	capitulum humeri
Բժիշկ	բժիշկ	medicus, jater
Բիբ	բիբ	pupilla
Բնութիւն	բնութիւն, էութիւն	natura, substantia
Գիշտութիւն	հեղահյութ	humor
Գլխացաւ	գլխացաւ	cephalgia, cephalaea
Գլուխ	գլուխ	caput,
Գործ	գործունեութիւն, գործանութիւն	functio

يرقان

شبكة

الاعور  
الاصفر

بط

բ

գ

κεφαλαίη

*Դոնապան	դոնա	بواب	pylorus	πυλωρός
*Դոներով աղէճորտ	դեղ		medicamentum	φάρμακός
Դեղ	երակարգը		phlebitis	
Դմուրցա, դամարցա			tuberculum	
Ելունդ	Բժրիկ, պալար		cornea	
Եղջերենի	Եղջերենի	قرنية	1. vas	
Երակ	1. անոթ		2. vena	
	2. երակ		3. nervus	
Երակ աննել	արյունատուփյուն		facies	
Երես	գեմբ, երես		ren	
Երիկամունք	երիկամ		duodenum	
*Երկտաասան	տասներկուամանյա աղիք	الاثنى عشرى	testiculus, testis, ovium, orchis	
Երկուտրիք	ամուրձիք			
Երնճկատալ	հորանջել		lingula	
			organon sensuum	
Զանկիկ	լեզվակ		noxa	
Զգայութիւնք	զգայարաններ		Venus	
Զեն	վնաս		corpus vitreum	
Զենութիւն	վնաս, չարիք		1. articulatio	
Զուհրալ	Երուսյակ մուրրակ	الزهره	2. organon	
Զուճաճի	ապակենի	زجاجي	Saturn	
Զօղուած	1. հող			
Զօհալ	2. դործարան			
	Երեակ մուրրակ, Սատուրն	زحل		



Ը	հումոր	رطوبة	humor
Ք	Քաթ	Տեղահյութ	manus
	Քաթ ստիզն	ձեռք, գաստակ	pes
	Քարբիշ, Քարբեկանունք	ոտ, ներքան	cilium
	Քոք	արանան, արանանունք, Քարբիշ	pulmo
	Քոփումալ	Քոք	gastricismus
		ստամոքսի խանգարում,	
		դժվարամարսելիւն	
Կ	Կապուս	առաներկումառանլա	diodenum
	Կեզու	բիբի լայնանալուց լույսի	intellectus
	Կեզի	ցրվել, սփռվել	oedema
		միտք	
		ալտուց	
		ալտուց	
Լ	Լազարյան	լիճ	paralysis n. facialis
	Լեզու	լիճային ներքի լուծանք	lingua
	Լեզի	լեղազարկ	vesica fellea, chole-
			cystis
	Լնրդ	լարդ	hepar
	Լխեն	ոզն	vertebra
	Լսելիք	լսողություն	auditus
	Լուծումն ի վեր	փսխում	vomitus, emesis
	Լուծումն ի վար	լուծ, փրկումություն	diarrhoea
	Լուծման դեղ	լուծողական	laxantia
	Լուծք չղիք	զույգ չղիք	nervus gemellus

Հույս	Հույս		
Հուսաբեր	Աբրույակ մուրրակ		
Հուանթագ	Հուանթագ		
* Հուանթիտ	տեսաներզ		
Խ			
Խաղաարտ	խոց	عينية	ulcus
* Խաղողենի	ծխածան		iris (uvea Galeni)
Խանուածք	խանութածք	قرنية	crasis
Խանիթ	եղջերենի		cornea
Խելապատակ	ուղեղապատակ		meninx,
Խելք	միտք, խելք		intellectus
Խէչափառ	բաղկեղ		cancer, carcinoma
Խծկած	բիբի կարծում		obturatio, oclusio (pupillae)
Խիլտ	հեղահյութ	الخلط	humor
Խողք	խողատանձ		scrofula
* Խոճառամ	կոշտ, անհարթ, փշոտ		logos
Խօսք	խոսք		ulcus, helcos
Խոց	խոց		larynx
Խոշակ	կոկորդ, խոշակ		surdus
Խուլ	խուլ	خمار	amens
Խումար	խելազար		amentia
Խումարութիւն	խելազարութիւն		
Մ			
Մաղիկ	ծաղիկ		variola
Մամելիք	ձնոտ, ձամելու գործարան		maxilla
Միծ	սախնք, կանացի կրծքաղեղձ, ծիծ		mamma

Սղի	բազկուսիք	os brachii, humerus
Ծննդույ տեղ	կոնք	pelvis
Ծնունդ	ծնունդ	partus
Սոժորակ	զլխանան, ծածրակ	occiput
Մունկ	ծնկոսիք, ծունկ	patella, rotula
Կաթ	կաթ	lac
*Կաթաբերն	1. ազիշ	1. lymph
Կաթուղիկե	2. ազշային անոթներ	2. vas lymphatica
*Կամշ	բազկի երակ	v. catholica
	բորբոքային հեղաճյուղ,	καθολική
	մատերիա	
*Կարճայ	խոց	ulcus
Կեանք	կյանք	vita
Կիֆալ	կեֆալիկ երակ	v. cephalica
Կող	կող	costa
Կողացաութիւն	պլեվրա	pleuritis
*Կոշբած	շաղկապենի	conjunctiva
Կոոլ (վերին, ներքին)	կոոլ	palpebra, blepharon
Կոճուկ	աճառ	cartilago, chondros
Հազիմ	մարսեցնող	aer
Հաւայ	օդ	morbus
*Հիլաթ	հիվանդություն	intestinum rectum
*Հիմն և գլխալուծիւն	ազիկ ազիք	
աղձորապն		

Հոգի (բնութեան, կենդանութեան, զգայութեան, տեսողական)

Չ

Չայն  
 \*Չայնատր աղէձորտ  
 Չեռն  
 \*Չլի սպիտակուցներ  
 \*(Նոսր սպիտակուց ձկի)  
 Չուք

Ղ

Ղալաղայ աննել  
 \*Ղուլին  
 Ղուլինջ  
 \*Ղուլքր

pneuma

VOX  
 colon  
 manus  
 humor aqueus

testis, orchis

colon  
 colica

iens crystallina  
 irons  
 os frontale  
 coxa

pilus

Հոգի

ձայն  
 խթաղիք  
 ձեռք  
 ջրային հեղաշյուք

ամորձի, երկուրիք

غاب  
 قولون  
 قولنج

جاذب  
 جليدي

հաճ, բափ, փրփուր

Ճ

բարշտ  
 սպինյակ  
 ձակատ  
 ձակատակր  
 կոնքոսկր

Մ

մազ  
 նուրբ ձեղքվածքներ ունեցող

Ճազիր  
 Ճալխախ  
 Ճակատ  
 Ճակատին սակր  
 Ճուռ

Մազ  
 Մազկալած

Մահ	մահ	معص	mors
Մաղաս	լորձ		phlegma
Մաղձ	լեզր		bilis, fel, chole
(Մաղձ խարտեակ,			
Մաղձ սե)			
Մաճաս	նաճանչալին դարկերակ	المعصر	a. radialis
*Մանր աղձնորտ	զարարաղիք, դտաղիք		intestinum ileum
Մաշկ	թաղանթ		membrana
Մասեխ	Հրատ մոլորակ	المریخ	Mars
Մասիք	բանդ	ماسك	digitus
Մատունք	մատ, մասներ		dorsum
Մէջք	Յիկն, Յիկունք, կոնակ, մէջք		
Մթխալ	ծանրության բաշ՝ հալաօտ	مثقال	
	մեկ ու կես գրամի եւ 5,1 գրամի		
Միզոց, միզն	թաղանթ		membrana
Միզուկ	միզանցք		urethra
Միս	1. մկան		1. musculus
	2. միս		2. caro
Մկնատամ	որբն		lichen
Մկունք	մկան		musculus
Մշիմալ	1. անոթների	مشيمه	1. chorioidea
	2. սաղմը պատող թաղանթ		2. chorion
Մոռացում	անհուշություն		amnesia
Մորթ, մորթի	1. թաղանթ		1. membrana
	2. մաշկ		2. corium, derma,
			cutis
Մսան	մարմնի մտտ մտք, մանավանդ		musculus atissimus
	մեջքից ներքև		dorsi (m. gluteus)

բնույթ

Մ ուղեֆառատի	շաղկապների	ملحة	conjunctiva
*Մ ուղեֆառատի	սիրելի, դուրեկան	محبه	Yupiter
Մ ուղեֆառատի	լուանթագ	مشترى	intestinum rectum
*Մ ուղեֆառատի	ուղիղ աղիք	المستقيم	barba
Մ օրուս, մօրուք	մորուք		
3			
Յանկապուսիտ	ցանցների (ուշ ապրերակված)	عكبرونية	retina
*Յանկապուսիտ	մասր	عينية	iris (uvea Galeni)
Յանկուած	ծխածան		cumulus
Յիմար	ափելցուկ	حمار	amens
Յիշողութիւն	խելագար		memoria
Յօնք, չունք	հիշողութիւն		supercilium
*Ներքին բերան	ունք		
ստամոքսին			
նուազ մի սղեարտ			pylorus
	դրուլ		πυλорός
	կողովափր (պատենափր) դաշ-		
	խուրան		
Շ			
*Շապարիտ	ցանցների	شبكة	retina
Շարժողութիւն	շարժում		actus, agitatio
Շիրիան	դարկերակ	شريان	arteria
Շիրիկ	կնճիթ, բունջութ		sesamum
Շլնի	վիզ, պարանոց		collum, cervix
Շլուսիւն	շլուսիւն		strabismus
Շունչ	շնչառութիւն, շունչ		respiratio
Ողն	ողն		vertebra

columna vertebralis

os

pes

abdomen, venter

phlegma

memoria

pylorus

v. basilica

sclera

vitiligo

umbilicus, omphalos

pupilla

1. nervus

2. tendo

3. musculus

tendo

nervosus

1. urina

2. ureter

secretum

lacrima

sulfur (auriculare)

saliva

sperma

بلغم

باب

صلبيّة

սղնաշար

ոսկոր

ոտ

փոր, սրտվան

լարձ

հիշողություն

դրուժ

բազիլի խոր հիմնական երակ,

շահաամօր

պնզենի

պիսակ

պորտ

բեր

Ջ

1. նյարդ

2. ջիլ

3. մկան

ջիլ

ներվալին

1. մեզ

2. միզածորան

արտազատանք

արատուք, արցունք

ծծումք (ականջի)

բուք, շողբ

սերմ

Ողնաշար

Ոսկր

Ոտք

Սրտվան

Պարզամ

Պահողություն

Պայ

Պասիլիկ

Պինդ մարմին

Պիսակ

Պորտ

Պտուղ աչքի

Ջեզ

Ջիլ

Ջղալին

Ջրհեզ

\*Ջուք

\*Ջուք աղի

\*Ջուք լեղի

\*Ջուք բազք

\*Ջուք հաամ

Ս

\*Սալիմ

\*Սառնենի

Սափտալ

Սափտալիտա

Սարգոստենի

Սաբթալ

Սաֆրալ

\*Սեկ

Սեբոմ

Սիրա

Սկաւառակ

Սպի

Սոխալ

Ստածում

Ստամոք

Ստամոքին յատանն

Սրունք

Սուլիպէ

\*Վաթած

\*Տաղիլ

Տաղաղալ

աղիճ, բաղցած աղիք

ոսպնյակ

սև մաղձ

մեղամաղձոտ

ցանցենի (ոչ տարբերակված մազ)

ուղեղային կաթիլած

խարտաշ մաղձ

1. անոթենի

2. սաղմը պատող թաղանթը

սերմ

սիրա

դանդ

սպի

չրդղուխուն

բուժում

ստամոքս

ստամոքսի հատակ

սրունք

պնդենի

բիրի լայնանալուց լույսի

ցրվել, սփռվել

S

զալարաղիք, դառաղիք

1. թաղանթ

2. խով, շերտ

intestinum jejunum  
lens crystalina

atrabilis

retina  
apoplexia cerebri

1. chorioidea  
2. chorion

sperma  
cor

cranium

cicatrix

ascites

medicatio

ventriculus, gaster  
fundus ventriculi

crus

sclera

չասճիք, ճճուջոջ

صائم  
جليدي  
سوداء

عكبيونية  
سكنه  
الصفراء

استسقاء

صلبية

دقيق  
طبقة



14-13	Տարանձալ Տաֆիալ Տեսանելիք Տեսութիւն	աստիճան վտարող տեսանելիք, տեսողական օրգան տեսողութիւն	درجه طافيه	gradus organon visus, lux visus
	*Յամար աղճորտ Յանկութիւն Յաւ Յաւած	Յ աղիճ, բաղլցած աղիք սեռական հակում հիվանդութիւն հիվանդ		intestinum jejunum libido sexualis morbus aegrotus
	Ուխտաւոր (բխտաւոր) Ուխտաւորութիւն (բխտաւորութիւն) Ուղեղ (բղեղ) Ուանցարութիւն	Ու վերնատ, լուանտ վերնատութիւն, լուանատութիւն ընկնազորութիւն ուղեղ ալտուղ	استسقا عجى	epilepticus epilepsia cerebrum, encephalon oedema
	Փառափուշտ Փալճաղ Փող *Փող չեղ Փոր Փորացաւութիւն Փորոք, փորուած Քար	Փ միզափամփուշտ փալճաղ շնչափող տեսանելիք փոր, սրովան 1. ստամոքսի բորբոքում 2. աղբորոք զանդուղեղի փորիկ, փորոք քարի հիվանդութիւն		vesica urinaria lien trachea n. opticus abdomen, venter 1. gastritis 2. enterocolitis ventriculus encephali lithonephrosis

Քիթ	բիթ	nasus
Քթափող	բթածակ, սունդ	naris
Քնատեղ	բունք	tempus
Քոս	բոս	scabies
Քուֆեշ	Վարանիթ, վարդածոց, բուֆեշ	scarlatina
*Քունաշ	ժողովածու	
	0	
Օդ (*պիստա, *խուստ)	օդ (ներշնչման, արտաշնչման)	aer (inspiratorius, expiratorius)
Օտարիտ	փառվածու մուրրակ	Mercurius
	9	
Յալիճ	անդամալուծության	paralysis

کناشه

عطار

فالج

С. А. ВАРДАНИАН

### АРМЯНСКАЯ МЕДИЦИНСКАЯ ТЕРМИНОЛОГИЯ В XII ВЕКЕ (НА ОСНОВАНИИ ТРУДОВ МХИТАРА ГЕРАЦИ И АБУСАИДА ПО АНАТОМИИ)

В настоящей работе автором были изучены армянские медицинские термины XII века на основании принадлежащего перу Мхитара Гераци фрагмента «О строении глаза» и «Анатомии человека» Абусаида.

Проведенное исследование позволило автору прийти к следующим выводам:

1. Армянская медицинская терминология в XII веке находилась на довольно высоком научном уровне. Подавляющее большинство ее терминов составляли коренные армянские слова (75%).

2. Армянская медицинская терминология была тесно связана с арабской и греко-латинской терминологией. В вышеупомянутых трудах Мхитара Гераци и Абусаида подавляющее большинство заимствованных терминов—арабского и греческого происхождения.

3. В развитии армянской медицинской терминологии большую роль сыграли крупнейший армянский врач средневековья Мхитар Гераци и врач сирийского происхождения Абусаид, трудившийся на ниве армянской медицины. По нашим данным, Мхитар Гераци использовал 27 новых терминов, а Абусаид—37. Особенно велика заслуга Мхитара Гераци, который создал целую традицию в области медицинской терминологии, в частности, в области офтальмологии.

4. На основании изучения медицинских терминов, извлеченных из вышеупомянутых трудов Мхитара Гераци и Абусаида, автором был составлен армянско-арабо-латинский медицинский словарь средневековых армянских терминов, который служит приложением к статье (280 терминов).

S. A. VARDANIAN

### LA TERMINOLOGIE MEDICALE ARMÉNIENNE AU XII SIÈCLE (D'APRÈS LES OUVRAGES EN ANATOMIE DE MKHITAR HERATSI ET D'ABOUSSAID)

L'article est consacré aux termes médicaux arméniens du XII siècle extraits du fragment „Sur la structure de l'oeil“ de Mkhitar Heratsi et de „L'anatomie de l'homme“ d'Aboussaïd.

Une étude minutieuse a permis à l'auteur de conclure:

1. La terminologie médicale arménienne se trouvait au XII siècle à un niveau assez élevé. La majeure partie des termes étaient d'origine arménienne (75%).

2. La terminologie médicale arménienne était étroitement liée à la terminologie arabe et gréco-latine. Dans les ouvrages précités de Mkhitar

Heratsi et d'Aboussaid la plupart des termes empruntés sont d'origine arabe et grecque.

3. Mkhitar Heratsi, le célèbre médecin arménien du Moyen Age, et Aboussaid, médecin d'origine syriaque mais travaillant dans le domaine de la médecine arménienne, ont joué un rôle important pour le développement de la terminologie médicale arménienne. D'après nos données Mkhitar Heratsi a utilisé 27 nouveaux termes médicaux et Aboussaid 37. Particulièrement grand est le mérite de Mkhitar Heratsi qui a établi les traditions de la terminologie médicale, en particulier dans le domaine de l'ophtalmologie.

Le travail sur les termes médicaux extraits des ouvrages de Mkhitar Heratsi et d'Aboussaid a permis à l'auteur de l'article de rédiger un dictionnaire armeno-latin des termes médicaux de l'Arménie médiévale. Ce dictionnaire comprenant près de 280 termes est donné en appendice.